**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք, Արմավիրի մարզ, գ. Արագած, Հեռ. 0231-6-62-02 ,
aragats.armavir@mta.gov.am

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 61
*04 ապրիլ 2017թ.*

*Հարգարժան պարոն Ղահրամանյան*

*Արմավիրի մարզի Արագածի գյուղապետարանը Ձեզ է ներկայացնում Արագած համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտ ամսվա կայացրած որոշումները: Կարգադրություններ չեն արձակվել:*

*Առդիր՝ 6 որոշում*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ

Կատ.՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

01 ՄԱՐՏԻ 2017թվականի N 14-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Արագած համայնքի բնակիչներ Գառնիկ Հայկազի Սահակյանը /ծնված՝25.02.1947թ./, Մելանյա Անդրանիկի Ալեքսանյան /ծնված՝ 27.01.1953թ./ և Արթուր Գառնիկի Սահակյանը /ծնված՝ 25.10. 1974թ./ դիմել են գյուղ Արագած 1-ին փողոցի թիվ 53 հասցեում գտնվող, իրենց պատկանող/ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 31.03.1991թ. թիվ 6 որոշման/0.11 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0011 հա հողամասի, օրինական հողամասի և ավել օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ իրավունքի վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Արագած համայնքի 1 փողոց թիվ 53 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Գառնիկ Հայկազի Սահակյանի /ծնված՝25.02.1947թ./, Մելանյա Անդրանիկի Ալեքսանյանի /ծնված՝ 27.01.1953թ./ և Արթուր Գառնիկի Սահակյանի /ծնված՝ 25.10. 1974թ./գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0.11 հա հողամասին կից ավել օգտագործվող 0.0011 հա հողամասի, ընդհանուր հողամասի վրա

կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների /բնակելի տուն 124.5 քմ՝կառուցված 1987թ., ծածկ 6.4 քմ՝ կառուցված 1987թ., թոնրատուն 20.7 քմ՝ կառուցված 1990թ., օժ. շինություն 71.3 քմ,՝ կառուցված 1990թ. ծածկ 4.8 քմ՝կառուցված 1990թ., սանհանգույց 8.5 քմ՝ կառուցված 1990թ., անասնաշենք 18.1 քմ՝ կառուցված 1990թ., զուգարան 1.7 քմ,՝ կառուցված 1990թ., ջերմատուն 221.3 քմ՝ կառուցված 1990թ., պարիսպ 2.9 քմ՝ կառուցված 1990թ./ նկատմամբ:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են «ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Գառնիկ Հայկազի Սահակյանի /ծնված՝25.02.1947թ./, Մելանյա Անդրանիկի Ալեքսանյանի /ծնված՝ 27.01.1953թ./ և Արթուր Գառնիկի Սահակյանի /ծնված՝ 25.10. 1974թ./սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական:

4. Բնակելի տանը տրամադրել 1-ին փողոց թիվ 53 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

2017թ. մարտի 01
գ.Արագած

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 narinearsenyan@mail.ru


# ՈՐՈՇՈՒՄ

02 ՄԱՐՏԻ 2017թվականի N 15-Ա

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 28-ի թիվ 2 որոշումը և Արագած համայնքի բնակիչ Յուրիկ Հարությունյանի դիմումը.*

*որոշում եմ՝*

*1. Արմավիրի մարզի Արագած գյուղի բնակիչ Յուրիկ Հարությունյանին պատկանող 04-014-0068-0010 ծածկագրով տնամերձ հողամասին տալ թիվ 23 փողոց N 12 հասցե-համարանիշը:*

*2. Սույն որոշումը ներկայացնել Անշարժ գույքի Արմավիրի մարզային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

2017 թ. մարտի 02
գ.Արագած

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 16-Ա

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 28-ի թիվ 2 որոշումը և Արագած համայնքի բնակիչ Զարիֆ Ջամալի Հասոյանի դիմումը.*

*որոշում եմ՝*

*1. Արմավիրի մարզի Արագած գյուղի բնակիչ Զարիֆ Ջամալի Հասոյանին պատկանող տնամերձ հողամասին տալ թիվ 32 փողոց N 4 հասցե-համարանիշը:*

*2. Սույն որոշումը ներկայացնել Անշարժ գույքի Արմավիրի մարզային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

2017թ. մարտի 10
գ.Արագած

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

13 ՄԱՐՏԻ 2017թվականի N 17-Ա

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ և 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 28-ի թիվ 2 որոշումը և Արագած համայնքի բնակիչ Վիլիկ Ծմավոնյանի դիմումը.*

*որոշում եմ՝*

1. *Արմավիրի մարզի Արագած գյուղի բնակիչ Վիլիկ Ծմավոնյանին պատկանող սեփական տանը տալ թիվ 1 փողոց N 65 հասցե-համարանիշը:*

2. *Սույն որոշումը ներկայացնել Անշարժ գույքի Արմավիրի մարզային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:*

3. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

2017 թ. մարտի 13
գ.Արագած

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

24 ՄԱՐՏԻ 2017թվականի N 18-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արմավիրի մարզի Արագած համայնքի բնակիչ Շողիկ Շմավոնի Աբրահամյանը /ծնված՝01.01.1930 թ./ դիմել է գյուղ Արագած 1-ին փողոցի թիվ 60 հասցեում գտնվող, իրեն պատկանող 1500 քմ օրինական հողամասին կից և ավել օգտագործվող 290 քմ օրինական օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ իրավունքի վերականգնելու խնդրանքով:*

*Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1. Վերականգնել Արմավիրի մարզի Արագած համայնքի 1 փողոց թիվ 60 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Շողիկ Շմավոնի Աբրահամյանի /ծնված՝ 01.01.1930թ./գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1500 քմ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 290 քմ օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների /բնակելի տուն 55.0 քմ՝կառուցված 1986թ., աստիճան 1.3 քմ՝ կառուցված 1986թ., ծածկած մուտք 75.4 քմ՝ կառուցված 1946թ., բնակելի տուն 109.8 քմ,՝ կառուցված 1986թ. բնակելի տուն 6.8 քմ՝կառուցված 1986թ.,*

բնակելի տուն 36.0 քմ՝ կառուցված 1946թ., բնակելի տուն 19.5 քմ՝ կառուցված 1946թ., թոնրատուն 16.1 քմ,՝ կառուցված 1946թ., թռչնանոց 5.5 քմ՝ կառուցված 1986թ., զուգարան 0.6 քմ՝ կառուցված 1986թ./ նկատմամբ:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են «ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Շողիկ Շմավոնի Աբրահամյանի /ծնված՝ 01.01.1930թ./սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական:

4. 0043-0021 ծածկագրին տալ 1-ին փողոց թիվ 60 հասցեն:

5. Չեղյալ համարել համայնքի ղեկավարի 18.01.2017թ. թիվ 04-Ն որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՄԱՎՈՐՅԱՆ

2017թ. մարտի 24
գ.Արագած

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

24 ՄԱՐՏԻ 2017թվականի N 19-Ա

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով.*

*որոշում եմ՝*

1. *2017 թվականի ապրիլի 25-ին անցկացնել համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողներ՝ աշխատակազմի քարտուղար Նարինե Էմիլի Արսենյանի ծածկագիրը՝ 1.2-1 և առաջին կարգի մասնագետ Վարազդատ Գարեգինի Համբարձումյանի /ծածկագիր՝ 3.2-1/ հերթական ատեստավորումը:*

2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ**

2017թ. մարտի 24
գ.Արագած